ԿԱՐԵՆ ՀԱՄԼԵՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
(Ծննդյան 50-ամյակի առթիվ)*

Լրացավ ճանաչված պատմաբան, գիտության և կրթության փորձառու կազմակերպիչ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական հարցերի գծով փոխտնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կարեն Համլետի Խաչատրյանի ծննդյան 50-ամյա և գիտական գործունեության 25-ամյա հոբելյանները:

Կ. Խաչատրյանը ծնվել է 1969 թ. մայիսի 25-ին, Երևանում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 1986 թ., միութենական նպատակային մրցույթով ընդունվել է Բելառուսական պետական համալսարանի պատմության ֆակուլտետը:

1987–1989 թթ. Կ. Խաչատրյանը ծառայել է Խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո՝ 1989 թ., ուսումը շարունակել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, որն ավարտել է 1993 թ.:

1994 թ. Կ. Խաչատրյանի գործունեությունը սերտորեն կապված է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հետ, որտեղ նա ձևակերպվել է հայցորդ, իսկ 1995 թ. փետրվարի 1-ից հրամանագրվել աշխատանքի որպես ավագ լաբորանտ: 1998 թ. Կ. Խաչատրյանը պաշտպանել է թեկնածուական («ՀՍԽՀ և ՌՍՖԽՀ փոխհարաբերությունները 1920–1922 թթ.», գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրանտ Ավետիսյան), 2015 թ.՝ դոկտորական ատենախոսություն («Հայաստանը ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի համակարգում (1922–1991 թթ.)»), 2006 թ. ստացել է դոցենտի, 2017 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1999–2008 թթ. նա զբաղեցրել է ինստիտուտի գիտական քարտուղարի պաշտոնը, 2008 թ. ինստիտուտի գիտական հարցերի գծով փոխտնօրենն է, առաջատար գիտաշխատող: 2016 թ. համատեղությամբ վարում է նաև ինստիտուտի նորաստեղծ Ընդհանուր պատմության բաժնի վարիչի պաշտոնը: Կ. Խաչատրյանը երկար տարիներ Պատմության ինստիտուտի գիտական, ինչպես նաև ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի 004 «Հայոց պատմություն» մասնագիտական խորհուրդների անդամ է (2003–2005 և 2009–2011 թթ. եղել է խորհրդի գիտական քարտուղարը):

---

* *Ընդունվել է տպագրության 13. III. 2019 թ.:*

Կ. Խաչատրյանը գիտակազմակերպչական գործունեությունն արդյունավետ զուգակցում է գիտամանկավարժական աշխատանքի հետ. 2003–2009 թթ. վարել է Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնը, իսկ 2009 թ. մինչև օրս ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրայի Պատմության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչն է: 2014 թ. Կ. Խաչատրյանը դասավանդում է նաև Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: Նրա գիտական ղեկավարությամբ կատարվել են բազմաթիվ ավարտական և մագիստրոսական աշխատանքներ, երկու ասպիրանտ (Համո Սուքիասյան, Գագիկ Ժամհարյան) հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ:

Կ. Խաչատրյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայաստանի նոր և նորագույն ժամանակաշրջանի պատմության տարաբնույթ հիմնախնդիրները՝ Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն, հայ–ռուսական հարաբերություններ, Հայաստանի առաջին, երկրորդ (խորհրդային) հանրապետությունների, ԼՂԻՄ–ի պատմություն և այլն: Նա հեղինակ է չորս մենագրության, 50-ից ավելի գիտական հոդվածների, որոնք հրատարակվել են ինչպես Հայաստանի Հանրապետության առաջատար հայագիտական ամսագրերում («Պատմաբանասիրական հանդես», «Լրաբեր հասարակական գիտությունների», «ՎԷՄ», «Բանբեր Հայաստանի արխիվների» և այլն), այնպես էլ արտասահմանյան հեղինակավոր պարբերականներում («Новая и новейшая история», «Историческое пространство. Проблемы истории стран СНГ» *և այլն):*

Ճանաչված պատմաբանի անդրանիկ մենագրությունը նվիրված է 1985–1991 թթ. ԽՍՀՄ մինիստրների խորհրդի նախագահ, Հայաստանի ազգային հերոս Նիկոլայ Ռիժկովի գործունեությանը («Великий друг армянского народа – Н. И. Рыжков», Ереван, *2004): Աշխատությունում վեր է հանված Ն. Ռիժկովի ունեցած ծանրակշիռ ներդրումը 1988 թ. Սպիտակի երկրաշարժի հետևանքների վերացման գործում:*

Կ. Խաչատրյանի «Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թթ.» մենագրությունը (Երևան, 2007) թեկնածուական ատենախոսության վերամշակված և լրացված տարբերակն է: Այստեղ արխիվային բազմաբնույթ փաստաթղթերի, մամուլի հրապարակումների, թեմային առնչվող պատմագիտական գրականության լայն հենքի վրա խորությամբ ուսումնասիրվել ու նորովի լուսաբանվել են Հայաստանի խորհրդայնացման, Խորհրդային Հայաստանի և Ռուսաստանի ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության բազմաթիվ հիմնախնդիրներ: Դրանք ներկայացվում են տարածաշրջանի, Հայաստանի և Ռուսաստանի 1920–1922 թթ. պատմության համապատկերի վրա:

Նա հեղինակ է նաև «Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920–1930-ական թվականներին» (Երևան, 2015) ուսումնասիրության (համահեղինակներ՝ Համո Սուքիասյան, Գեղամ

Բաղալյան), որտեղ փաստական հարուստ հիմքի վրա ամբողջական լուսաբանված է 1920–1930-ական թվականներին Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները: Աշխատանքը պատկերացում է տալիս Հայաստանի ներկա սահմանների ձևավորման ընթացքի մասին: Նշյալ հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ:

Կ. Խաչատրյանի երկարատև գիտական աշխատանքի արդյունք է «Հայաստանը ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի համակարգում (1922–1991 թթ.)» (Երևան, 2015) արժեքավոր մենագրությունը: Նրանում հեղինակը հայ պատմագիտության մեջ առաջին անգամ ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի (ՌԱՀ) ստեղծման ու փուլային զարգացման պատմության ընդհանուր համատեքստում բացահայտում է Խորհրդային Հայաստանի արդյունաբերության և գիտության բացառիկ ներդրումը ԽՍՀՄ ՌԱՀ-ում խորհրդային գրեթե ամբողջ ժամանակաշրջանում:

Գիտնականը կազմել և հրատարակել է փաստաթղթերի ու նյութերի երեք ժողովածու: «Из истории армяно-украинских, венгерских и молдавских отношений» *հոդվածների և փաստաթղթերի ժողովածուում (համակազմող՝ Հովհաննես Ալեքսանյան) (Երևան, 2012) հրատարակված նյութերը լույս են սփռում այդ կապերի ձևավորման և զարգացման պատմության վրա: Նրա առաջաբանով հրատարակված փաստաթղթերի հաջորդ ժողովածուները նվիրված են արցախյան հիմնախնդրին (համակազմող՝ Հրանտ Աբրահամյան): «Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար (1923–1988)» (Երևան, 2011) և «Հայության կոչերն ու դիմումները ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար (1988–1989)» (Երևան, 2014) փաստաթղթերի և նյութերի ժողովածուներում տպագրված վավերագրերում հիմնավորում է, որ խորհրդային ժամանակաշրջանում համայն հայությունը՝ թե՛ Խորհրդային Հայաստանում և ԼՂԻՄ-ում, և թե՛ Սփյուռքում, պայքարել է Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին միավորելու համար:*

2018 թ. Պատմության ինստիտուտի 75-ամյա հոբելյանի առթիվ Կ. Խաչատրյանի խմբագրությամբ լույս տեսավ «Պատմության ինստիտուտ – 75» արժեքավոր գիրքը (կազմողներ՝ Կ. Խաչատրյան, Հակոբ Մուրադյան, Հ. Սուքիասյան), որտեղ ի մի է բերված ինստիտուտի գիտական, գիտակազմակերպչական և գիտակրթական գործունեությունը: Ներկայացված է ինստիտուտի անցած ուղին, բաժինների կատարած աշխատանքները և այլն:

Պատմաբանը գործուն մասնակցություն է ունեցել Պատմության ինստիտուտի կողմից հրատարակվող «Հայոց պատմության» ակադեմիական նոր բազմահատորյակի չորրորդ հատորի (1918–1991 թթ.) երկու գրքերի պատրաստմանը, հատորի պատասխանատու խմբագրի տեղակալն է: Մասնակցել է նաև «Հայոց պատմության» դպրոցական դասագրքերի ստեղծմանը: Նրա ուշադրության կենտրոնում է եղել նաև ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» տարեգիրքը, որի խմբագրական խորհրդի նախագահի տեղակալն է:

Կ. Խաչատրյանը կարևոր ներդրում ունի Հայաստանի Հանրապետությունում առօրեականության պատմության թեմայով հետազոտությունների սկզբնավորման հարցում: Այս թեմատիկայով նրա ղեկավարած դրամաշնորհային թեմաների (կատարողներ՝ Գ. Ժամհարյան, Հ. Սուքիասյան, Գայանե Ղազարյան) կատարման ընթացքում պատմագիտական ավանդական և ժամանակակից մոտեցումների ու մեթոդների զուգորդմամբ կատարված հետազոտությունների արդյունքում միանգամայն այլ՝ հասարակ անհատի տեսանկյունից ուսումնասիրվել և ուսումնասիրվում է Խորհրդային Հայաստանի 1920–1930-ական և 1940–1960-ական թվականների պատմության ներկայումս վերջնական արժևորում չստացած, երբեմն էլ միայն զգացական, միակողմանի գնահատականների արժանացող բազմաթիվ իրողություններ:

Կ. Խաչատրյանը գիտական զեկուցումներով, դասախոսություններով և ելույթներով հանդես է եկել հանրապետական ու միջազգային (Ռուսաստան, Բելառուս, Վրաստան, Ուկրաինա, Մոլդովա, Ղրղզստան, Իրան, Եգիպտոս, Լիբանան և այլն) տասնյակ գիտաժողովներում և գիտագործնական սեմինարներում, Սփյուռքի հայկական համայնքներում:

Պրոֆ. Խաչատրյանը հետխորհրդային տարածքում ճանաչված և հեղինակություն վայելող պատմաբան է: Նա ղեկավարել է Պատմության ինստիտուտի պատվիրակությունը և տարիներ շարունակ հանդես եկել դասախոսություններով ԱՊՀ պատմության ինստիտուտների միջազգային ասոցիացիայի ներքո կազմակերպվող երիտասարդ պատմաբանների ամառային դպրոցներում:

Գիտամանկավարժականից զատ՝ Կ. Խաչատրյանն իրականացրել և իրականացնում է նաև հանրային-հասարակական գործունեություն: Իբրև պատմաբան-խմբագիր մասնակցել է Հայաստանի հանրային հեռուստաընկերության «Ինչու է աղմկում անցյալը» խորագրով շուրջ 40 պատմավավերագրական արժեքավոր ֆիլմերի ստեղծմանը (հեղինակ՝ Մանուկ Մուրադյան): Հայաստանի գիտության ու մշակույթի ճանաչված ներկայացուցիչների հետ «Պատմության և մշակույթի էջեր» ծրագրի շրջանակներում դասախոսություններով հանդես է եկել ՀՀ զինված ուժերի և Արցախի Հանրապետության (ԱՀ) պաշտպանության բանակի տարբեր զորամասերում, որի համար արժանացել է ՀՀ պաշտպանության նախարարության պատվոգրի, իսկ 2018 թ. ԱՀ նախագահ Բ. Սահակյանի հրամանագրով պարգևատրվել է «Երախտագիտության» մեդալով: Կ. Խաչատրյանը պարգևատրվել է նաև ՀՀ ԳԱԱ գովեստագրով, Պատմության ինստիտուտի վաստակագրով, ՀՀ Սփյուռքի նախարարության պատվոգրով և այլն:

Շնորհավորելով մեր գործընկերոջը՝ մաղթում ենք նրան նորանոր ձեռքբերումներ գիտական և գիտակրթական ասպարեզներում, նոր ուսումնասիրություններ, որոնք, վստահաբար, կհամալրեն հայկական պատմագիտության արժեքավոր հրատարակությունների շարքը:

Աշոտ Մելքոնյան
Համո Սուքիասյան